

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱԳԵՏ ԼԻԴԱ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-ԻՑ  
ՄԻՆՉԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ը ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես Լիդա Մուրադյանս, 2020 թվականի հոկտեմբերի 23-ից աշխատելով որպես ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի փորձաքննության գործակալության փորձագետ, կատարել եմ հետևյալ աշխատանքները.

> Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» N 1441-Լ որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունից բխող 2019-2020 թվականների գործողությունների ծրագրի 14-րդ կետով սնանկության համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով Արդարադատության նախարարությանը տրված հանձնարարականի համատեքստում՝

> ներկայացրել եմ առաջարկություններ օրենսդրության կատարելագործման վերաբերյալ,

> հանձնարարականի շրջանակներում իրականացրել եմ իրավական ակտերի նախագծերի, հայեցակարգերի, կանոնակարգերի և միջոցառումների ծրագրերի առաջարկների մշակում,

> իրականացրել եմ պետական մարմինների կողմից ստացված իրավական ակտերի նախագծերի փորձաքննություն, որի արդյունքում նախապատրաստել եմ եզրակացություններ իրավական փորձաքննության ենթարկված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ, մասնավորապես՝ փորձաքննել եմ

